

Դեմքը կորցրած մարդը

հեղինակ՝ Ջեյ Լոնդոն
թարգմանիչ՝ Էդուարդ Ավագյան

Դա նշանակում էր վերջ: Չվող թռչունների նման ձգտելով դեպի տուն, դեպի եվրոպական մայրաքաղաքները, Սուբյենկովը երկար մի ճանապարհ անցավ, որը լի էր տանջանքներով ու սարսափով: Եվ ահա այստեղ, ռուսական Ամերիկայում, ցանկալի նպատակից ավելի հեռու, քան երբևէ եղել էր, այդ ճանապարհը ընդհատվեց: Նա նստած էր ձյուններին, ձեռքերը մեջքին կապված, և սպասում էր կտտանքներին: նա սարսափով էր նայում իր առջև փռված վիթխարի կազակին, որը ցավից տնքում էր: Տղամարդիկ արդեն ձանձրացել էին այդ հսկայից և նրան կանանց ձեռքն էին տվել: Եվ կանայք, ինչպես վկայում էր գոհի վայնասունը, կարողացել էին գերազանցել տղամարդկանց՝ իրենց հրեշային դաժանությամբ:

Սուբյենկովը նայում էր այդ բոլորին և նողկանքից սարսռում էր: Նա մահից չէր վախենում: նա այնքան հաճախ էր կյանքը վտանգի ենթարկել Վարշավայից մինչև Նուլատո ընկած դժվարին ճանապարհին, որ մահվան մտքից այլևս չէր վախենում: Բայց նրա ամբողջ էությունը ընդվզել էր կտտանքների դեմ: Այդ բոլորը նողկանք էր ծնում,— և ոչ նրա համար, որ պիտի անմարդկային տառապանքներ կրեր,— նողկանք էր ծնում խղճալի տեսարանը, երբ նա, ցավից կծկված, պիտի խնդրեր, աղաչեր, թախանձեր ճիշտ այնպես, ինչպես Մեծ Իվանը և մյուսները: Դա նողկալի էր: Մահվանը դիմավորել արիաբար, ինքն իր հետ մենակ մնացած, ժպիտը և կատակը շուրթերին, այ՛ սա արժանավայել բան կլիներ: Բայց կորցնել ինքնասիրությունը, երբ հոգիդ ճնշվում է ֆիզիկական ցավից, ճչալ ու ջղաձգվել կապկի նման, անասուն դառնալ, ահա սա է սարսափելին:

Իսկ փրկության ոչ մի հույս չկար: Հենց սկզբից էլ, այրվելով Լեհաստանի ազատագրության կրքոտ երազանքով, նա ճակատագրի ձեռքին խաղալիք դարձավ: Եվ հենց սկզբից էլ,— Վարշավայում, Սանկտ-Պետերբուրգում, Սիբիրի հանքերում, Կամչատկայում, մորթու որսորդների խարխուլ նավակներում,— ճակատագիրը նրան դեպի այս վախճանն էր տանում: Հիրավի, աշխարհի ստեղծման առաջին իսկ օրից նրան հենց այդպիսի մահ էր վիճակված, նրան, ով այնքան նուրբ ու զգայուն էր իրեն շրջապատող ամեն ինչի նկատմամբ, նրան, ով երազող էր, բանաստեղծ ու արվեստագետ: Դեռ լույս աշխարհ չէր եկել, բայց արդեն նախասահմանված էր, որ թրթռուն նյարդերի այդ կծիկը, ինչպիսին նա էր, դատապարտված էր ապրելու աղաղակող գազանային դաժանության մեջ և մեռնելու հյուսիսային գիշերվա այդ հեռավոր երկրում, աշխարհի ծայրին գտնվող այդ մռայլ անկյունում:

Նա հոգոց հանեց: Մի՞թե սա, որին տեսնում է իր առջև, Մեծ Իվանն է եղել, առանց նյարդերի, ասես երկաթից ձուլված մի մարդ, կազակ, որը ծովային ավազակ էր դառել, եզան պես պաղարյուն մի էակ, այնքան ամուր նյարդային սիստեմով, որ նորմալ մարդուն ցավ պատճառող ամեն մի հարված նրա համար սովորական խուտուտ էր թվում: Բայց և այնպես Նուլատոյի այդ հնդկացիները Մեծ Իվանի մոտ նյարդեր գտան և շոշափեցին դրանք մինչև նրա թայրտացող հոգու ամենախոր արմատները: Նրանք հասան իրենց ցանկությանը: Անհասկանալի է թվում այն բանը, թե մարդ ինչպե՞ս կարող է տանել այդ

բոլորը և դեռ կենդանի մնալ: Մեծ Իվանը թանկ վճարեց իր նյարդային համակարգի ամրության պատճառով: Նա երկու անգամ ավելի դիմացավ, քան մնացածները:

Սուբյեկտվը զգում էր, որ ինքը չի կարող տանել կազակի կրած տանջանքները: Ինչո՞ւ Իվանը չի մեռնում: Աուբյեկտվին թվում էր, թե ինքը կարող է խելագարվել, եթե սիրտ կտրատող այդ վայնասունը չդադարի: Քայց չէ՞ որ, երբ վայնասունը դադարի, կգա իր՝ Սուբյեկտվի հերթը: Ահա այնտեղ, սպասելով այդ պահին, կանգնած է Յակագան և ինքնագոհ ժպտում է, հենց այն Յակագան, որին ընդամենը մի շաբաթ առաջ նա դուրս քշեց ամբողջ, մտրակով հարվածելով դեմքին: Յակագան կգրադվի նրանով: Յակագան, իհարկե, նրա համար պահած կլինի ամենակատարելագործված կոտանքները, ամենանուրբ տանջանքները: Երևի, այդ նոր կոտանքը շատ ուժեղ էր, դատելով այն բանից, թե Իվանը ինչպես ոռնաց: Նրա գլխին հավաքված կանայք ծիծաղելով ու ծափ տալով՝ ետ քաշվեցին: Սուբյեկտվը տեսավ նրանց կատարած հրեշավոր գործը և սկսեց հիստերիկ ծիծաղել: Հնդկացիները նայում էին և զարմանում, որ նա ի վիճակի է ծիծաղելու: Բայց Սուբյեկտվը չէր կարողանում զսպել իրեն:

Ո՛չ, այդպես չի կարելի: Նա մի կերպ իրեն հավաքեց, ջղաձգության նուպաները թուլացան: Նա ստիպեց իրեն մտածել ուրիշ բանի մասին և սկսեց վերհիշել իր անցած կյանքը: Նա պատկերացրեց մորն ու հորը, կյոռ խալերով իր փոքրիկ պոնիին, ֆրանսիացի սպասավորին, որը իրեն պարել էր սովորեցնում և մի անգամ թաքուն բերեց Վոլտերի հին, քրքրված հատորը: Նորից Սուբյեկտվը իր առջև տեսավ Փարիզը, մառախլապատ Լոնդոնը, ուրախ Վիեննան, Հռոմը: Նորից նրա աչքերի առջև պատկերացավ այն երիտասարդների խիզախ խումբը, որը, ինչպես և ինքը, երագում էր ազատ Լեհաստանի և լեհական թագավորի մասին, որ գահ պիտի բարձրանար Վարշավայում: Ահա թե որտեղից սկսվեց այս երկար ուղին: Եվ ի՞նչ, նրանցից միայն ինքը կենդանի մնաց: Մեկը մյուսի հետևից Սուբյեկտվը հիշեց ճանապարհին գոհված այդ խիզախներին, սկսած այն երկուսից, որոնց կախեցին Սանկտ-Պետերբուրգում: Մեկին ծեծելով մահվան դուռն էին հասցրել բանտապահները, մյուսը, որ խմբերի հետ արքայ էր գնում, ընկավ ինչ-որ հեռավոր, արյունով ողողված ճանապարհին, որով նրանք քայլում էին ամիսներ շարունակ, կազակ-ուղեկցողների մտրակների տակ: Եվ միշտ էլ նրանց շրջապատում էր դաժանությունը, վայրենի ու կատաղի դաժանությունը: Նրանք մեռնում էին տենդից, հանքահորում, մտրակների տակ: Վերջին երկուսը մեռան արդեն փախուստից հետո, կազակների հետ տեղի ունեցած ընդհարման ժամանակ, և միայն ինքը մինչև Կամչատկա հասավ, ինչ-որ մի ճամփորդից գողանալով նրա փաստաթղթերն ու փողերը և թողնելով, որ մեռնի ձյունների վրա:

Նա դաժանությունից բացի ուրիշ ոչինչ չէր տեսել: Այս բոլոր տարիներին, երբ նրա սիրտը ապրում էր անցյալով՝ նկարիչների արվեստանոցներում, թատրոններում, աշխարհիկ երեկույթներում, նրան շրջապատում էր դաժանությունը: Նա արյան գնով էր ձեռք բերում իր կյանքը: Սպանում էին բոլորը: Եվ նա էլ սպանեց այն ճամփորդին՝ փաստաթղթերի համար: Նա ցույց տվեց, թե ինչի է ընդունակ ինքը, երբ միևնույն օրը մենամարտեց ռուս երկու սպաների հետ: Նա ստիպված էր ինչ-որ ձևով ցույց տալ իրեն, որպեսզի արժանավոր տեղ գրավեր մորթու որսորդների մեջ: Նա պետք է գրավեր այդ տեղը: Նա հետևում էր թողել երկար, իրենից կարծես հազարավոր տարիներ իլավ ճանապարհը, որը ձգվում էր ամբողջ Սիբիրով և ամբողջ Ռուսաստանով մեկ: Այս ճանապարհով փախչելը անհնարին էր: Նա միայն կարող էր առաջ գնալ մռայլ, սառցապատ Բերինգյան ծովով դեպի Ալյասկա: Այս ճանապարհը տանում էր մի այնպիսի աշխարհ, ուր ամեն քայլի վրա վայրենությունը ավելի ու ավելի սարսափելի էր դառնում:

Մորթու որսորդների փոքրիկ նավակներում, մոլեգնող ցինգայի մեջ, առանց ուտելիքի և ջրի, ծովային անվերջանալի փոթորիկների դեմ մղվող պայքարում մարդիկ վեր էին անվում անասունների: Նա երեք անգամ Կամչատկայից դեպի արևելք լողաց: Եվ երեք անգամ, չտեսնված դժվարություններից ու տառապանքներից հետո, ողջ-առողջ վերադարձավ: Փախուստի ճանապարհը փակ էր, իսկ ետ դառնալ այն նույն ճանապարհով, որով եկել էր, Սուբյենկովը չէր կարող, որովհետև այնտեղ նրան սպասում էին հանքերը և մտրակը:

Վերջապես չորրորդ ու վերջին անգամ նա դեպի արևելք լողաց: Նա ճանապարհ ընկավ նրանց հետ, որոնք առաջին անգամ հայտնաբերեցին հեքիաթային Ծովարջի կղզիները, բայց հետները չվերադարձավ որսի բաժանմանը և Կամչատկայի վայրի կերուխումներին չմասնակցելու համար: Նա երդվեց երբեք չվերադառնալ այնտեղ: Նա գիտեր՝ որպեսզի հասնի իր համար սիրելի եվրոպական մայրաքաղաքներին, պետք է առաջ գնա: Դրա համար էլ նավից նավ տեղափոխվեց և մնաց այդ անձանոթ կիսախավար վայրերում: Նրա ընկերներն էին որսորդ սլավոնները և արկածներ որոնող ռուսները, մոնղոլները, թաթարները և Սիբիրի հինավուրց բնակիչները: Նրանք արյունով, էին բացում իրենց ճանապարհը այս նոր աշխարհի վայրենիների մեջ: Նրանք քարուքանդ էին անում իջևաններ իջևանների հետևից միայն նրա համար, որ էսկիմոսները հրաժարվում էին տուրք վճարել մորթիներով, իսկ սրանց վրա էլ իրենց հերթին հարձակվում էին ուրիշ նավերի անձնակազմերը: Սուբյենկովը մի ֆիննի հետ միասին միակ մարդն էր է որ վերջ ի վերջո ազատվեց այդ ավազակախմբից: Նրանք մենակ ու սոված, ձմեռը անցկացրին Ալեուտյան ամայի կղզիներում, իսկ զարնանը հազար հնարավորությունից մեկը վիճակվեց՝ նրանց վերցրեց մորթու որսորդների ինչ-որ մի նավ:

Բայց նրան միշտ շրջապատում էին սարսափելի դաժանությունն ու վայրենությունը: Մի նավից անցնելով մյուսը և ոչ մի դեպքում չջանկանալով վերադառնալ, նա, ի վերջո մի այնպիսի նավ ընկավ, որ հարավ էր գնում: Նրանք գնում էին Ալյասկայի ափի երկայնքով և ամենուր հանդիպում էին վայրենիների: Ամեն անգամ, երբ նրանք խարխիս էին գցում որևէ կղզու կամ մայրցամաքի որևէ մռայլ ժայռի մոտ, նրանց սպասում էր ճակատամարտը կամ էլ փոթորիկը: Կամ նրանց վրա էր հարձակվում մրրիկը, սպառնալով փշրել նավը, կամ էլ հայտնվում էին ռազմական կանոնները՝ լեցուն ռոնացող տեղացիներով, որոնց դեմքերը ներկված էին մարտական գույներով, և որոնք լողում էին դեպի նավը, որպեսզի իրենց կաշվի վրա փորձեն ծովահենների հրազենի սպանիչ ուժը: Այսպես նրանք մի կերպ հասան հարավ, հեքիաթային Կալիֆորնիա: Պատմում էին, որ այնտեղ ապրում են արկածներ որոնող իսպանացիներ, որոնք եկել էին Մեխիկոյից: Նա իր հույսերը այդ իսպանացիների վրա էր դնում: Միայն թե փախչի նրանց մոտ, իսկ հետո ավելի հեշտ կլինի. մեկ կամ երկու տարուց հետո,— դա արդեն նշանակություն չունի,— բայց վաղ թե ուշ, նա Մեխիկո կհասնի, իսկ հետո նավ կնստի ու Եվրոպա կգնա: Բայց նրանք իսպանացիների չհանդիպեցին: Նորից ու նորից նրանք դեմ առան վայրենության նույն անանցանելի պատնեշին: Այս երկրի բնակիչները, դեմքերը ռազմական գույնով ներկված, նրանց ափից հեռու էին քշում: Ի վերջո, նավերից մեկը գրավվեց և ամբողջ անձնակազմը կոտորվեց, նավապետը որոշեց դադարեցնել որոնումները և նորից հյուսիս գնաց:

Տարիներ անցան: Սուբյենկովը ծառայում էր Տեբենկովի հրամանատարության տակ, երբ կառուցվում էր Միխայլովյան ամրոցը: Երկու տարի նա անց կացրեց Կուսկոքվիմի ստորին հոսանքում: Ամռանը՝ հուլիս ամսին, երկու անգամ նրան հաջողվեց լինել Կոցեբուի գետաբերանում, ուր այդ օրերին հավաքվում էին տարբեր ցեղեր՝ փոխանակություն կատարելու համար: Այստեղ կարելի էր գնել և՛ Սիբիրյան բժավոր

եղջերվի մորթի, և՛ Դիոմիդ կղզուց բերված ոսկոր, և՛ Հյուսիսային օվկիանոսում որսված ծովացուլի մորթի, և զարմանահրաշ, չգիտես որտեղից ձեռք բերված, քարե կանթեղ, որը մի ցեղից մյուսին է անցնում: Մի անգամ նույնիսկ նա անգլիական որսորդական դանակ էլ տեսավ: Սուբյենկովը գիտեր, որ այստեղ այն դպրոցն, է, ուր կարելի է աշխարհագրության սովորել: Չէ՞ որ այստեղ նա հանդիպում էր էսկիմոսների, որոնք եկել էին նոր տոնի նեղուցից, Կինդ կղզուց, Սուրբ Լավրենտիոսի կղզիներից, Ուելսի Պրինցի և Բարբոուի հրվանդաններից: Այստեղ այդ վայրերը ուրիշ անուն ունեին և նրանց միջև ընկած տարածությունը ոչ թե կիլոմետրերով էր չափվում, այլ օրերով:

Տեղացիները այստեղ էին գալիս հեռավոր վայրերից, իսկ քարե կանթեղները կամ էլ այս պողպատե դանակը, ձեռքից ձեռք անցնելով, ավելի հեռավոր տեղեր էին ընկնում: Սուբյենկովը վախեցնում էր էսկիմոսներին, համոզում, կաշառում: Հեռուներից եկող յուրաքանչյուր ճամփորդի կամ էլ անձանոթ ցեղի ներկայացուցչի նրա մոտ էին բերում: Նրանք պատմում էին անհաշիվ ու անասելի վտանգների մասին, որոնք հանդիպում էին ճամփորդներին, վայրի գազանների, թշնամական ցեղերի, անանցանելի անտառների և բարձրաբերձ լեռնաշղթաների մասին: Բայց բոլոր այս պատմությունների մեջ անպայման հանդես էին գալիս կապույտ աչքերով և շեկ մազերով սպիտակամորթ մարդիկ, որոնք կռվում էին դևերի նման և անդադար մորթի էին որոնում: Նրանք հանդիպում էին արևելքում, հեռու-հեռու արևելքում, բայց ոչ ոք նրանց չէր տեսել: Դրանք միայն լուրեր էին, որոնք բերնից բերան էին անցնում:

Դժվարին էր այդ դպրոցը: Դժվար է աշխարհագրություն սովորել անհասկանալի բարբառների միջոցով, այն մարդկանցից, որոնց խավար ուղեղի մեջ փաստերը խառնվում էին հորինվածքներին, այն մարդկանցից, որոնք տարածությունը չափում էին իջևանատեղերով, և ոչինչ հաստատ չէին կարող ասել անցուղու դժվարությունների պատճառով: Վերջ ի վերջո Սուբյենկովը իմացավ այն, ինչը նրան արիություն ներշնչեց: Արևելքում մի մեծ գետ կա, և հենց այդտեղ էլ ապրում են այդ կտպուտաչ մարդիկ: Այդ գետը կոչվում է Յուրոն: Միխայլովյան ամրոցից հարավ մի մեծ գետ է ծովը թափվում, որը ռուսներին հայտնի է Քուիքպակ անունով: Լուրեր էին պտտվում, թե դրանք միևնույն գետերն էին:

Սուբյենկովը վերադարձավ Միխայլովյան ամրոցը: Մի տարի շարունակ նա ջանում էր արշավախումբ կազմակերպել Քուիքպակ գետի հոսանքն ի վեր: Եվ հենց այդ ժամանակ էլ հայտնվեց Մալախովը, կես ռուս մի մարդ, որը ղեկավարում էր ամենահանդուգն և ամենադաժան բախտախնդիրների խումբը, որոնց նմանը երբեք Կամչատկայից դեռ չէր եկել: Սուբյենկովը դարձավ նրա օգնականը: Նրանք անցան Քուիքպակի գետաբերանի լաբիրինթոսով, հետևում թողեցին հյուսիսային ափի առաջին ոչ բարձր բլուրները և կաշեպատ կանոններով, որոնք մինչև եզրերը լցված էին սպրանքով ու ռազմամթերքով, հինգ հարյուր մղոն յոդացին մոտ հինգ հանգույց արագությամբ գետի ուժեղ հոսանքն ի վեր, որի լայնությունը երկուսից մինչև տասը մղոն կլիներ, իսկ խորությունը՝ մի քանի սաժեն էր: Մալախովը որոշեց Նուլատոյում ամրոց կառուցել: Սուբյենկովը սկզբում համոզում էր շարունակել ճանապարհը, բայց հետո հաշտվեց դրա հետ: Մոտենում էր երկարատև ձմեռը: Ավելի լավ էր սպասել: Հենց որ ամառը գա և սառույցը հալվի, նա կգնա Քուիքպակի հոսանքն ի վեր և կաշխատի հասնել Հուդզոնի ծովածոցում եղած ընկերությունների ֆակտորիաներին: Մալախովը երբեք էլ չէր լսել այն մասին, թե Քուիքպակը հենց Յուրոնն է, իսկ Սուբյենկովը այդ մասին նրան չասաց:

Սկսվեց ամբողջ կառուցումը: Նրանք տեղացիներին ստիպում էին աշխատել: Տաշված գերաններից կառուցվող պատերը բարձրանում էին Նուլատոյի հնդկացիների տնքոցի ու հառաչանքի տակ: Նրանց թիկունքներին պար էր գալիս մտրակը, իսկ այդ մտրակը ծովահենների երկաթյա ձեռքումն էր գտնվում: Երբեմն հնդկացիները փախչում էին, բայց նրանց բռնում էին, ապա ետ էին բերում, պառկեցնում ամբողջ առջև, և այստեղ, ցեղակիցների հետ միասին, նրանք իրենց կաշվի վրա զգում էին մտրակի ուժը: Երկու հնդկացիներ մահացան մտրակի տակ, մյուսները ցմահ հաշմանդամ դարձան: Իսկ մնացածների համար այդ բանը դաս եղավ և այլևս փախչելու փորձ չէին անում: Ամբողջ կառուցումը դեռ չէին վերջացրել, երբ ձյուն եկավ և մորթեղեն ձեռք բերելու ժամանակը վրա հասավ: Հնդկացի ցեղի վրա ծանր հարկեր դրեցին: Նրանք շարունակում էին մտրակներով ձեռել ու շարդել հնդկացիներին, իսկ որպեսզի հարկը կարողանան հավաքել, պատանդ վերցրեցին կանանց ու երեխաներին և նրանց հետ այնպիսի դաժանությամբ էին վարվում, որին ընդունակ են միայն մորթու որսորդները:

Եվ ի՞նչ, դա արյունալից մի ցանք էր, իսկ հիմա եկավ հունձի ժամանակը: Ամբողջ այրեցին: Հրդեհի չարագույժ լույսի տակ խմբի կեսը ոչնչացավ: Մյուսները կտտանքների ենթարկվեցին: Մնաց միայն Սուբյենկովը, կամ, ավելի ճիշտ, Սուբյենկովը և Մեծ Իվանը, եթե միայն ձյան վրա տնքացող ու աղաղակող արարածին կարելի էր Մեծ Իվան կոչել: Սուբյենկովը նկատեց, թե Յակագան նայելով իրեն, ինչպես է չարախնդում: Նա ի՞նչ կարող էր ասել Յակագային, որի դեմքին մնացել էր մտրակի հետքը: Վերջապես, Սուբյենկովը չէր կարող Յակագային մեղադրել, բայց նրան զզվեցնում էր այն միտքը, թե իր հետ հաշիվ պիտի մաքրի Յակագան: Նա ուզում էր Մակամուք ցեղի առաջնորդից խնդրել, բայց բանականությունը թելադրեց, որ այդպիսի խնդիրքը իզուր կլինի: Այդ ժամանակ նա որոշեց քանդել իրեն կապկպող գոտիները և մեռնել կռվի մեջ: Այդպիսի մահը շատ արագ կլինի: Բայց նա գոտիները պոկել չկարողացավ: Եղջերվի կաշվից պատրաստված գոտիները շատ ամուր էին: Նա շարունակեց մի ելք փնտրել և գլխում նոր միտք ծնվեց: Նա նշան արեց Մակամուքին, որ կանչեն մերձափնյա բնակիչների բարբառը իմացող թարգմանին:

— Օ, Մակամուք,— ասաց Սուբյենկովը,— ես մեռնել չեմ ուզում: Ես մեծ մարդ եմ և հիմար բան կլինի, որ մեռնեմ: Ախր ես չեմ էլ մեռնի: Ես այն չեմ, ինչ որ այս լեշերը:

Նա մի հայացք զցեց տնքացող արարածի վրա, որը մի ժամանակ Մեծ Իվանն էր և արհամարհանքով խփեց ոտքով:

— Ես շատ իմաստուն եմ և չեմ մեռնի: Ես մի մեծ բուժիչ դեղ գիտեմ: Միայն ես գիտեմ այդ դեղը: Եվ քանի որ ես չեմ ուզում մեռնել, ուրեմն պատրաստ եմ փոխարենը այդ դեղը տալ:

— Ի՞նչ դեղ է որ,— հարցրեց Մակամուքը:

— Դա հատուկ դեղ է:

Սուբյենկովը ձևացրեց, թե իբր տատանվում է, արժե՞, արդյոք, հայտնել իր գաղտնիքը, թե՞ ոչ:

— Լա՛վ, քեզ կասեմ: Եթե այդ դեղի մի կաթիլը մաշկիդ քսես, ապա մաշկդ ժայռի պես կարծր և երկաթի պես ամուր կդառնա: Ու ոչ մի զենք չի կարող խոցել: Ամենաուժեղ հարվածն անգամ ոչինչ չի կարող անել: Ոսկրից պատրաստված դանակը դրա դեմ ոնց որ ցեխի կտոր, իսկ պողպատե այն դանակները, որ մենք ենք ձեզ տվել, իսկի չեն էլ ծակի: Ինձ ի՞նչ կտաս, թե որ այդ գաղտնիքն ասեմ:

— Զեզ կբաշխեմ քո կյանքը,— պատասխանեց Մակամուքը թարգմանի միջոցով:

Սուբյենկովը արհամարհանքով ծիծաղեց:

— Եվ դու մինչև կյանքիդ վերջը իմ տանը ստրուկ կլինես,— շարունակեց Մակամուքը:

Լեիր ծիծաղեց ավելի արհամարհանքով:

— Թող իմ ձեռքերն ու ոտքերը արձակեն, այն ժամանակ կխոսենք:

Առաջնորդը նշան արեց և երբ Սուբյենկովի ձեռքերն ազատեցին, նա մի ծխախոտ փաթաթեց և սկսեց ծխել:

— Դրանք հիմար խոսքեր են,— ասաց Մակամուքը, — այդպիսի խոտ չկա: Չի կարող լինել: Դանակը ամեն մի խոտից էլ ուժեղ է:

Առաջնորդը կասկածում էր, բայց միաժամանակ տատանվում: Նա շատ անգամ էր տեսել, որ մորթու որսորդներին ամեն տեսակ դիվային օյիններ են հաջողվում: Եվ դրա համար էլ նա տատանվում էր:

— Դու կենդանի կմնաս և ստրուկ չես լինի,— ասաց նա:

— Դա քիչ է:

Սուբյենկովը իր դերը խաղում էր շատ սառնարյուն, կարծես թե աղվեսի մորթու համար էր առևտուր անում:

— Դա չտեսնված դեղ է: Շատ անգամ է փրկել իմ կյանքը: Ես ուզում եմ նարտ ու շներ ստանալ և քո որսորդներից վեց հոգի ինձ պետք է ուղեկցեն գետի հոսանքով ցած և անվտանգ հասցնեն մինչև Միխայլովյան ամրոցի մոտ եղած վերջին օթևանը:

— Դու պետք է ապրես այստեղ և մեզ սովորեցնես քո բոլոր դիվային օյինները,— պատասխանեց նա:

Սուբյենկովը լուռ թոթվեց ուսերը: Նա ծխախոտի ծուխը բաց թողեց ցուրտ օդի մեջ և հետաքրքրությամբ նայեց նրան, ինչ մնացել էր հսկա կազակից:

— Իսկ սա՞,— անսպասելի հարցրեց Մակամուքը, ցույց տալով Սուբյենկովի պարանոցը: Այնտեղ երևում էր դանակի հարվածից մնացած կապտավուն սպին, որը ստացել էր Կամչատկայում, ինչ-որ վեճի ժամանակ:— Զո խոտը վա՛տ խոտ է: Դանակը ավելի ուժեղ է, քան քո դեղը:

— Նա, ով խփեց ինձ, շատ ուժեղ մարդ էր, — Սուբյենկովը քննող հայացքով նայեց Մակամուքին:— Ավելի ուժեղ, քան դու, ավելի ուժեղ, քան քո ամենաուժեղ որսորդը, ավելի ուժեղ քան սա էր:

Եվ նա նորից իր մոքասիների քթով խփեց կազակին, որը նողկալի մի մսակույտ էր դարձել: Չնայած Մեծ Իվանը կորցրել էր գիտակցությունը, բայց կտտանքներից տանջված նրա մարմինը դեռ կառչած էր կյանքից:

— Եվ, բացի դրանից, դեղը թույլ էր: Այն տեղերում չկային անհրաժեշտ հատապտուղները, որոնք, ինչպես տեսնում եմ՝ ձեզ մոտ լիքն են: Այստեղ դեղը ուժեղ կլինի:

— Ես քեզ կթողնեմ, որ գնաս գետի հոսանքով ցած,— ասաց Մակամուքը,— և քեզ նարտ, շներ ու վեց որսորդներ կտամ:

— Դու շատ երկար ես մտածում,— հետևեց սառը պատասխանը:— Դու վիրավորեցիր իմ դեղը նրանով, որ անմիջապես չընդունեցիր պայմաններս: Լսի՛ր, ուրեմն, հիմա ավելի շատ բան պիտի պահանջեմ: Ես ուզում եմ հարյուր հատ կղբենու մորթի:— Մակամուքը ծաղրանքով ժպտաց:— Ես ուզում եմ հարյուր ֆունտ էլ չորացրած ձուկ ստանալ:— Մակամուքը գլխով արեց, ձուկ ինչքան ուզես կար և դա ոչինչ էլ չարժեր:— Ես ուզում եմ երկու նարտ ստանալ, մեկը ինձ, իսկ մյուսը՝ մորթիների ու ձկան համար: Բացի դրանից, թող վերադարձնեն իմ հրացանը: Եթե քեզ ձեռք չի տալիս իմ պահանջը, ապա իմացած եղիր, որ շուտով ավելի կմեծանա:

Յակագան ինչ-որ բան շնջաց առաջնորդի ականջին:

— Իսկ ինչպե՞ս իմանամ, որ քո դեղը իսկական է,— հարցրեց Մակամուքը:

— Դա շատ հեշտ է: Ամենից առաջ ես անտառ կգնամ...

Յակագան նորից շնջաց Մակամուքի ականջին, որը անվատահորեն օրորեց գլուխը:

— Դու կարող ես ինձ հետ քսան որսորդ էլ ուղարկել,— շարունակեց Սուբյենկովը:— Ես պետք է գտնեմ այն հատապտուղները և արմտիքը, որից եփում եմ իմ դեղը: Հետո դու կպատրաստես նարտերը, կբարձես ձկնով ու կղբենու մորթով, այնտեղ կդնես հրացանը և կընտրես վեց որսորդների, որոնք պետք է ինձ հետ գան ու երբ ամեն ինչ պատրաստ կլինի, ես վզիս կքսեմ այդ դեղը և գլուխս ա՛յ այս գերանին կդնեմ: Եվ այն ժամանակ թող քո ամենաուժեղ որսորդը վերցնի կացինը և երեք անգամ հարվածի իմ վզին: Դու ինքդ էլ կարող ես երեք անգամ հարվածել:

Մակամուքը բերանը բաց կանգնել էր, զարմացած մորթու որսորդների՝ իր համար նոր և ամենագարմանալի այդ հրաշքից:

— Բայց իմացիր, հա՛,— շտապով ավելացրեց լեհը,— որ ամեն մի հարվածից առաջ ես պետք է իմ վզին նորից դեղ քսեմ: Կացինը ծանր ու սուր բան է և ես չեմ ուզում, որ հանկարծ սխալ բան ստացվի:

— Ինչ ուզում ես, այն էլ կստանաս,— շտապ-շտապ ասաց Մակամուքը:— Պատրաստիր քո դեղը:

Սուբյենկովը աշխատեց թաքցնել իր ուրախությունը: Նա մի խիզախ խաղ էր սկսել և նահանջել այլևս չէր կարելի: Նա հանդիսավորությամբ ասաց.

— Դու պատասխանդ շատ ծամծմեցիր: Իմ դեղը անարգված է: Որպեսզի մաքրես այդ անարգանքը, ինձ պիտի տաս քո աղջկան:

Եվ նա մատով ցույց տվեց աղջկան, մի դժբախտ արարածի, որը շիլ աչքեր ուներ և գայլի ժանիքների պես դուրս ցցված ատամներ: Մակամուքը զայրացավ, բայց լեհը անվրդով փաթաթեց իր ծխախոտը ու սկսեց ծխել:

— Շտապիր,— սպառնալից ձայնով ասաց նա, — եթե դու էլի դանդաղես, ես ավելի շատ կպահանջեմ:

Վրա հասած լռության մեջ Սուբյենկովը իր առջև փոված հյուսիսային բնության մռայլ պատկերից մտքով սլացավ դեպի իր հայրենիքը և դեպի Ֆրանսիա, ու նայելով ցցված ատամներով այդ աղջկան, նա հիշեց մի ուրիշին, այն երգչուհուն, որի հետ ծանոթացավ, երբ դեռ պատանի, առաջին անգամ Փարիզ ընկավ:

— Զո ինչի՞ն է պետք աղջիկը,— հարցրեց Մակամուքը:

— Որպեսզի ինձ հետ նա էլ գետի հոսանքով ցած լողա:— Սուբյենկովը մի զննող հայացք զցեց աղջկա վրա:— Նրանից լավ կին դուրս կգա և քեզ արյունակից աղջկա հետ ամուսնանալու պատիվը մեծ նվեր է իմ դեղի փոխարեն:

Նա նորից հիշեց երգչուհուն և սկսեց քթի տակ մռմռալ այն երգը, որը այդ աղջիկն էր սովորեցրել: Նա նորից վերապրեց իր ամբողջ կյանքը, բայց այս անգամ իր անցյալի պատկերներին նայում էր ասես կողքից, ասես դրանք գրքի նկարներ լինեին, որոնք պատմում էին մի օտար մարդու ճակատագրի մասին: Առաջնորդի ձայնը անսպասելիորեն խախտեց լռությունը, և նա ցնցվեց:

— Ամեն ինչ կարվի,— ասաց Մակամուքը:— Աղջիկը կգա քեզ հետ՝ գետի հոսանքով ցած: Բայց իմացիր, հա՛, ես ինքս երեք անգամ պիտի կացնով հարվածեմ քո վզին:

— Բայց ամեն անգամ պիտի վզիս նորից դեղ քսեմ,— պատասխանեց Սուբյենկովը, ձևացնելով, թե անհանգստացած է:

— Դու ամեն հարվածից առաջ կքսես քո դեղը: Ահա այն որսորդները, որոնք պիտի հետևեն, որ չփախչես: Անտառ գնա և հավաքիր քո բույսերը:

Մակամուքին դեղի թանկարժեք լինելը համոզեց հենց լեհի ագահությունը: Իհարկե, միայն թանկարժեք միջոցը կարող է ուժ տալ այն մարդուն, որի վրա կախված է մահվան ստվերը, համառել և պառավ կնոջ նման սակարկել:

— Բացի դրանից,— շնչաց Յակագան, երբ լեիր իր պահակների հետ անհետացավ եղևնիների հետևում,— երբ դու կիմանաս բոլորը, կարող ես հեշտությամբ սպանել նրան:

— Ինչպե՛ս թե կարող եմ սպանել նրան,— հարցրեց Մակամուքը:— Դեղը չի թողնի, որ սպանեմ:

— Տեղեր կլինեն, ուր նա իր դեղը չի քսի:— պատասխանեց Յակագան:— Եվ մենք հենց այդ տեղից կխփենք: Գուցե ականջներից, հը՞: Մենք նիզակը կխրենք նրա մի ականջը և մյուսից դուրս կգա: Շատ լավ կլինի: Գուցե աչքերից էլ հնարավոր լինի: Երևի դեղը շատ ուժեղ է և նա իր աչքերին չի քսի:

Առաջնորդը գլխով արեց:

— Դու իմաստուն ես, Յակագա: Եթե նա ուրիշ դիվային բաներ չգիտի, ապա կսպանենք նրան:

Սուբյենկովը շատ ժամանակ չկորցրեց իր դեղամիջոցները հավաքելիս: Նա վերցրեց այն բոլորը ինչ ձեռքի տակ ընկավ, եղևնու փշատերև, ուռենու կեղև, թեղի, շատ լոռամրգի, որը նա որսորդներին ստիպեց քանդել և հանել ձյան տակից: Իր հավաքածին նա ավելացրեց մի քանի սառած արմտիք և ճամբար վերադարձավ:

Մակամուքը և Յակագան մի քայլ անգամ չէին հեռանում նրանից ուշի-ուշով հիշելով այն ամենի քանակությունն ու տեսքը, որը նա զգում էր եռման ջրով լի կաթսայի մեջ:

— Իմացեք, հա՛, լոռամրգին պետք է առաջին հերթին զցել,— բացատրեց Սուբյենկովը:— Ախ հա՛, մի բան էլ է պետք, մարդու մատ: Յակագա, թող, որ կտրեմ քո մատը:

Բայց Յակագան ձեռքերը պահեց հետևում և զայրացած նայեց նրան:

— Միայն ճկույթը,— ասաց Սուբյենկովը:

— Յակագա, տո՛ւր նրան քո մատը,— հրամայեց Մակամուքը:

— Այստեղ ինչքան մատ ուզես կա,— փնթփնթաց Յակագան, ցույց տալով ձյուներին ընկած տանջամահ մարդկանց:

— Պետք է կենդանի մարդու մատ լինի,— առարկեց լեիր:

— Դե ուրեմն դու կենդանի մարդու մատ կստանաս,— Յակագան կռացավ և կտրեց կազակի մատը:

— Նա դեռ չի մեռել,— բացատրեց Յակագան, իր արյունոտ ավարը գցելով լեհի ոտքերի մոտ:— Եվ, ընդհանրապես, սա լավ մատ է, որովհետև մեծ է:

Սուբյենկովը մատը գցեց կրակի մեջ, կաթսայի տակ և սկսեց երգել: Դա ֆրանսիական սիրային երգ էր և նա այդ երգը կատարում էր անսովոր հանդիսավորությամբ:

— Առանց այս բառերի դեղը ուժ չի ունենա,— բացատրեց նա:— Այս բառերը նրա հիմնական ուժն են: Դե, ահա՛, պատրաստ է:

— Կրկնիր բառերը, միայն դանդաղ, որ ես կարողանամ հիշել,— հրամայեց Մակամուքը:

— Միայն փորձից հետո: Երբ որ կացինը երեք անգամ ետ կթռչի իմ վզից, այն ժամանակ միայն ես կբացատրեմ այս բառերի գաղտնիքը:

— Իսկ եթե դեղը վատը դուրս գա՞,— անհանգստացած հարցրեց Մակամուքը:

Սուբյենկովը զայրացած նրա կողմը դարձավ.

— Իմ դեղը չի՛ կարող վատը լինել: Եթե նա վատը լինի, ապա ինձ հետ վարվեք այնպես, ինչպես վարվել էք մյուսների հետ: Ինձ էլ կտոր-կտոր արեք, ինչպես նրանց արեցիք:— Նա գլխի շարժումով ցույց տվեց կազակին:— Դեղը արդեն սատել է: Այսպես ուրեմն, ես դեղը քսում եմ վզիս և դրա հետ միասին՝ անեծքի խոսքեր եմ ասում:

Սուբյենկովը շատ լուրջ դեմքով սկսեց «Մարսելյոզ» երգել, միաժամանակ պարանոցին քսեց զգվելի շփոթը:

Նրա ներկայացումը ընդհատվեց մի վայրի ճիչով: Հսկա կազակը, որի մեջ վերջին անգամ բռնկվեց կյանքի հրեշավոր ուժը, գալարվեց տեղում: Հնդկացիները սկսեցին ծիծաղել, անսպասելիությունից ճչալ, ծափ գարկել, իսկ Մեծ Իվանը սարսափելի ջղաձգության մեջ գալարվում էր ձյան վրա:

Սուբյենկովը այդ տեսարանից վատ զգաց իրեն, բայց կարողացավ հաղթահարել սրտխառնուքի նոպան և ձևացրեց, թե բարկացած է:

— Այսպես գործը գլուխ չի գա,— ասաց նա,— վերջ տվեք նրան և այն ժամանակ մենք կսկսենք փորձել: Դե՛, Յակագա, վերջ տուր այս աղմուկին:

Երբ հրամանը կատարվեց, Սուբյենկովը դարձավ Մակամուքին:

— Եվ հիշիր, որ պետք է խփես ամբողջ ուժով: Մա երեխաների գործ չէ: Հապա վերցրու կացինը և խփիր գերանին, որ ես տեսնեմ տղամարդու պե՛ս ես խփում, թե՞ ոչ:

Մակամուքը հնազանդվեց և երկու անգամ ամբողջ թափով խփեց գերանին և մի մեծ կտոր պոկեց:

— Լավ,— Սուբյեկտվը նայեց հնդկացիների դեմքերին, որոնք կարծես խորհրդանշում էին բարբարոսության պատը, որը շրջապատել էր նրան այն օրվանից, երբ ցարական ոստիկանությունը Վարշավայում բանտարկեց իրեն:

— Կացինը վերցրու, Մակամո՛ւք, և կանգնիր ահա այստեղ: Ես կպառկեմ: Երբ ես ձեռքս թափ կտամ, ինչքան ուժ ունես խփիր: Եվ նայիր, հա՛, որ ոչ ոք քո հետևում կանգնած չլինի: Իմ դեղը շատ թունդ է, և կացինը կարող է ետ թռչել իմ վզից և ձեռքիցդ դուրս պրծնել:

Սուբյեկտվը նայեց մոռթով ու ձկնով լցված երկու նարտերին և լծված շներին: Կդրենու մոռթիների վրա դրված էր նրա հրացանը: Վեց որսորդներ, որոնք պիտի ուղեկցեին նրան, կանգնած էին նարտերի մոտ:

— Իսկ ո՞ւր է աղջիկը,— հարցրեց լեիր:— Մինչև փորձի սկսելը նրան այստեղ բերեք:

Երբ աղջկան բերեցին, Սուբյեկտվը պառկեց ձյուններին և գլուխը հոգնած մանկան նման, որը քնել է ուզում, դրեց գերանին: Նա այնքան դժվարին տարիներ էր տեսել իր կյանքում, որ իսկապես մահացու մի հոգնածություն էր զգում:

— Ես ծիծաղում եմ քեզ վրա և քո ուժի վրա, օ՛ Մակամուք,— ասաց նա,— խփի՛ր, խփի՛ր ինչքան ուժ ունես:

Նա բարձրացրեց ձեռքը: Մակամուքը բարձրացրեց կացինը, այն հսկայական կացինը, որով գերաններ են տաշում: Փայլփլուն պողպատը շողաց սառն օդում և, ինչ-որ հագիվ նկատելի մի պահ, կանգ առավ Մակամուքի գլխավերևում, իսկ հետո թափով իջավ Սուբյեկտվի մերկ վզին: Կացինը կտրեց մկաններն ու ողնաշարը և խոր խրվեց գերանի մեջ: Չարմացած վայրենիները տեսան, թե ինչպես գլուխը մի ամբողջ յարդ հեռու թռավ արնաթաթախ մարմնից:

Բոլորն էլ կանգնած էին սարսափելի շփոթված և լուռ էին, մինչև որ կամաց-կամաց սկսեցին գլխի ընկնել, որ ոչ մի դեղ էլ չկար: Մոռթիների որսորդը խաբել էր: Բոլոր գերիներից միայն նա էր ազատվել կտտանքներից: Այս էր նրա նպատակը, որի համար էլ նա սկսեց խաղը: Եվ բոլորը սկսեցին ծիծաղել: Ամոթից Մակամուքը գլուխը կախեց: Մոռթու որսորդը խաբեց իրեն: Մակամուքը կորցրեց դեմքը, կորցրեց հարգանքը իր ցեղակիցների աչքում: Նրանք շարունակում էին ծիծաղել: Մակամուքը շուռ եկավ և դանդաղ հեռացավ: Նա գիտեր, որ դրանից հետո իրեն այլևս Մակամուք չեն կոչի: Նրան Դեմքը կորցրած կանվանեն և նա չի կարող մինչև մահ ազատվել այդ խայտառակությունից: Եվ երբ էլ որ հավաքվեն հարևան ցեղերը,— գարնանը՝ սաղմոն որսալու համար, կամ ամռանը՝ ապրանք փոխանակելու,— ամենուր, բոլոր խարույկների մոտ, պիտի նորից ու նորքքց պատմեն այն պատմությունը, թե ինչպես Դեմքը կորցրածի մի հարվածով հանգիստ մեռավ մոռթիների որսորդը:

Եվ նա կարծես արդեն լսում էր, թե ինչպես մի հանդուգն երիտասարդ հարցնում է.

— Իսկ ո՞վ է Դեմքը կորցրածը:

— Դեմքը կորցրա՞ծը,— հետևում է պատասխանը:— Նրան Մակամուք էին կոչում, երբ դեռ չէր թոցրել մոռթիների որսորդի գլուխը: